ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 44-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 0.3679 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՎԵՐԱԲԱԺԱՆՎԱԾ՝ 0.13015 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.01.2021Թ. N 14-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ, 9-11-րդ, 12-րդ և 16-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված ավտոլվացման կետը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Գագիկ Լևոնի Էվոյանի դիմումը, հողամասի սեփականության իրավունքի N 1449746 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված 16.06.2020թ. N 340 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Լոռու մարզի Հաղպատ գյուղում գտնվող, 0.3679 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասից վերաբաժանված 0.13015 հա մակերեսով /ծածկագիր՝ 06-060-0037-000004/ հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 11, N 42 փոստային հասցե:
2. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ կետի՝ Գագիկ Լևոնի Էվոյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.3679 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից վերաբաժանված՝ 0.13015 հա մակերեսով հողամասի գործառնական

նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման նշանակության:

3. Օրինականացնել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 11, N 42 հասցեում գտնվող, Գագիկ Լևոնի Էվոյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.3679 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասից վերաբաժանված, 0.13015 հա մակերեսով հողամասում 2020թ. ինքնակամ կառուցված, 44.87 քմ արտաքին մակերեսով (41.4 քմ ներքին մակերեսով) ավտոլվացման կետը:
4. Օրինականացված ավտոլվացման կետի համար սահմանված՝ 49357 (քառասունինը հազար երեք հարյուր հիսունյոթ) դրամ արժեքով վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
6. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
7. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:
8. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 21.01.2021թ. «Սեփականության իրվունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված ավտոլվացման կետն օրինականացնելու, հողամասում ինքնակամ կառուցված անավարտ շինությունը նշագծված տարբերակով գրանցելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 14-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. փետրվարի 11
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 45-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 0.3679 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՎԵՐԱԲԱԺԱՆՎԱԾ, 02378 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱԳԾՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված անավարտ շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Գագիկ Լևոնի Էվոյանի դիմումը, հողամասի սեփականության իրավունքի N 1449746 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված 16.06.2020թ. N 340 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Լոռու մարզի Հաղպատ գյուղում գտնվող, 0.3679 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից վերաբաժանված 0.2378 հա մակերեսով

/ծածկագիր՝ 06-060-0037-000004/ տնամերձ հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 11, N 42/1 փոստային հասցե:

2. Համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 11, N 42/1 հասցեում գտնվող, Գագիկ Լևոնի Էվոյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.2378 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում առկա է ինքնակամ կառուցված 131.67 քմ արտաքին մակերեսով (105.0 քմ ներքին մակերեսով) անավարտ շինություն, որը ենթակա է գրանցման նշագծված տարբերակով որպես ինքնակամ կառույց:
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. փետրվարի 11

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 46-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի Թբիլիսյան խճուղու հարավային մասում գտնվող, 06-060-0210-0001 ծածկագրից առանձնացվող, 0.010004 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, Թբիլիսյան խճուղի, փողոց 28, N 210-1/2 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 11

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 47-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԾԱԾԿԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 29.12.2020թ. N 392-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 04022021-06-0033 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Վարդան Հրաչիկի Վարոսյանն ընդունել է բնակելի տունը, ծածկը, պարիսպը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Պղնձագործների փողոց, N 12/2 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 29.12.2020թ. N 392-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 168.78 քմ արտաքին մակերեսով (152.2 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը, 16.3 քմ արտաքին մակերեսով ծածկը, 9.3 քմ արտաքին մակերեսով պարիսպը, ընդհանուր՝ 479484 (չորս հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր ութսունչորս) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.02671 հա մակերեսով հողամասը 141029 (հարյուր քառասունմեկ հազար քսանինը) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Վարդան Հրաչիկի Վարոսյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում բնակելի տան, ծածկի, պարիսպի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 11
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 48-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.10.2020Թ. N 332-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի 22.10.2020թ. «06-002-0191-0013 ծածկագրում գտնվող, 0.007667 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, հողամասում կառուցված բնակելի տունն օրենքի ուժով սեփական համարելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 332-Ա որոշման մեջ «36» թվերի փոխարեն կարդալ «57/5» թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. փետրվարի 12
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 49-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.10.2020Թ. N 331-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի համայնքի ղեկավարի 22.10.2020թ. «06-002-0191-0012 ծածկագրից առանձնացված, 0.1580 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, հողամասում կառուցված շինություններն օրենքի ուժով սեփական համարելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 331-Ա որոշման մեջ «87» թվերի փոխարեն կարդալ «87/5» թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. փետրվարի 12
ք. Ալավերդի